

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ ԺԱՄԸ 12:00-
ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին`

Տիգրան Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահի տեղակալ)
Վաչե Գաբրիելյան	ՀՀ Ֆինանսների նախարար
Սերգո Կարապետյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գագիկ Խաչատրյան	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Իգոր Զարգարյան	ՀՀ վարչապետի խորհրդական
Գագիկ Մինասյան	ՀՀ Ազգային ժողովի ֆինանսական և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Արծվիկ Մինասյան	ՀՀ Ազգային ժողովի ֆինանսական և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ
Արմեն Մարտիրոսյան	ՀՀ Ազգային ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ
Լիանա Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ռոբերտ Հարությունյան	«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տնօրեն
Արսեն Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Բազրատ Ենգիբարյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ»-ի տնօրեն
Վազգեն Սաֆարյան	«Հայրենական ապրանք արտադրողների միություն» հասարակական կազմակերպության նախագահ, ՀՀ հանրային խորհրդի ֆինանսատնտեսական և բյուջետային հարցերի հանձնաժողովի նախագահ
Րաֆֆի Մելիսյան	«Հայաստանի Հանրապետության արտահանողների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Զեյնա Մակբեթ Ֆորբս	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության

	հայաստանյան գրասենյակի ղեկավար
Մանուկ Հերզնյան	«Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության տնօրեն
Ավագ Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» հասարակական կազմակերպության նախագահ
Գագիկ Գևորգյան	Հայ ոսկերիչների միջազգային ասոցիացիայի նախագահ
Սուրեն Բեկիրսկի	«Հայաստանի Հանրապետության թեթև արդյունաբերության գործատուների միություն» հասարակական կազմակերպության համանախագահ
Էմիլ Գրիգորյան	Հայաստանի ոսկեգործների և ակնագործների միության նախագահ
Տիգրան Հարությունյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ (խորհրդի քարտուղար)
Ալեքսան Պետրոսյան	«ՄԱՊ» փակ բաժնետիրական ընկերության նախագահ
Գագիկ Աբրահամյան	«Դի Սի Էյ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նախագահ
Հայկ Միրզոյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության քաղաքականության վարչության պետ
Սեդա Համազասպյան	Թարգմանիչ

1. ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքի մասին

 (Տ.Դավթյան, Ա.Պետրոսյան, Ա.Մինասյան, Ս.Բեկիրսկի, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանի ղեկույցը արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում իրականացված աշխատանքների վերաբերյալ և հավանություն տալ արդյունաբերական քաղաքականության իրագործման մոտեցումներին, ներկայացված կառավարման համակարգին:

2. Ռազմավարության շրջանակներում գերակա ոլորտների հստակեցում՝ ոլորտային ռազմավարությունների մշակման նպատակով

 (Տ.Դավթյան, Ա.Մինասյան, Մ.Հերզնյան, Ա.Ղազարյան, Բ. Ենգիբարյան, Ս.Կարապետյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց.

1) ընդունել ի գիտություն առաջին փուլի համար հետևյալ ոլորտների ընտրությունը՝ **Ճշգրիտ ճարտարագիտություն, դեղագործություն և կոնյակագործություն**, և նշված ոլորտների մշակման համար կատարված աշխատանքները.

2) հաշվի առնելով, որ կոնյակագործությունը հանդիսանում է գինեգործության ենթաճյուղ, կոնյակագործության և գինեգործության ոլորտների ռազմավարությունները դիտարկել նույն ռազմավարության՝ **գինեգործության ռազմավարության** ներքո.

3) ռազմավարության հաջորդ փուլի համար ընտրել **ոսկերչական արտադրատեսակների արտադրության ոլորտը**՝ ներառելով՝ ադամանդագործության, ժամացույցների արտադրության և ոսկերչության ու զարդեղենի արտադրության ենթաոլորտները և **թեթև արդյունաբերության ոլորտը**՝ ներառելով հագուստի, մանածագործական, կաշվի և կաշվե արտադրատեսակների արտադրության ենթաոլորտները.

4) մետաղագործության և ոչ մետաղական ոլորտներն այս պահին չներառել՝ հաշվի առնելով այն, որ այդ ոլորտները դեռևս ունեն լրացուցիչ ուսումնասիրման անհրաժեշտություն (հետագայում իրականացնել համապատասխան աշխատանքներ հաջորդ փուլերում ներառելու նպատակով).

3. Ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումների՝ պետության կողմից համաֆինանսավորման առաջարկվող ուղղությունները

 (Տ.Դավթյան, Գ. Գևորգյան, Ա.Պետրոսյան, Է.Գրիգորյան, Վ. Գաբրիելյան, Ա.Ղազարյան, Ռ.Հարությունյան, Մ.Հերզնյան Ա.Մարտիրոսյան, Գ.Աբրահամյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց.

1) հավանություն տալ օրակարգի 3-րդ հարցով ներկայացված ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումների՝ պետության կողմից ֆինանսավորվող գործիքակազմին.

2) սահմանել, որ նշված գործիքակազմը պետք է կիրառվի բացառապես ռազմավարությամբ ամրագրված ոլորտներում կոնկրետ ձեռնարկությունների համար.

3) ռազմավարության իրականացմանն ուղղված միջոցառումների ծրագրում ներառել միջոցառումներ

- ✓ առևտրային ներկայացուցչի գաղափարի զարգացմանն ուղղությամբ,
- ✓ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությանն ուղղությամբ,
- ✓ ՌԴ-ի առանձին տարածաշրջանների հետ համագործակցությանն ուղղությամբ՝ նպաստելով ուղղակի կապերի հաստատմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ